

ԳՐԻՉ ՍԱՐԳԻՍ ՊԱՐՏԱՎԵՑԻ

Ա. Ն. ՂԱՋԱՐՈՍՅԱՆ

Հայ ժողովրդի մշակութային ժառանգության մեջ իրենց անհամեմատելի տեղն ունեն հայերեն ձեռագրերը: Տասնյակ հազարավոր մատյանների կուրսսից հետո անգամ այսօր հաշվվում են ավելի քան երեսուն հազար հայերեն ձեռագիր, որ սփռված են աշխարհով մեկ՝ կազմելով ազգային դրաղարանների և մասնավոր հավաքածուների թանկագին մասը: Դրանք բոլորը զբաղվել են հայ գրիչների ձեռքով՝ «կենօք տառապանօք և դառը պանդխտության», ինչպես հաճախ կրկնում են նրանք:

Այդպիսի անձնվեր գրիչներից է տառապեալ ոգի տէր Սարգիս Պարսավելցին¹: Հիշատակարանային հատուկենտ կենսագրական ակնարկներից իմանում ենք, որ նա Ուտլաց աշխարհի Պարտավ քաղաքի աշխարհական բնտանիքից է, որդին է Սուլթանշահի և Մինախաթունի², 1427 թ. մի Հայսմավուրք օրինակելիս գրիչը վկայում է, որ ինքն արդեն «2(70) ամեայ» է³: Ուրեմն Սարգիսը ծնվել է 1357 թ. (1427—70=1357), Կրթությունը ստանալուց հետո սպասավորել է տնվում, ապա տեղափոխվել Գնդարքունիք: Քառասունից ավելի տարիներ զբաղվել է գրչությամբ. «Գրեցաւ վերջը գրոյս... ԽԲ (+2) տարի է, որ կու աշխատիմ, բանս իմ [սր]տովս չէ, միայն այդ չափ [էք]»⁴: Նրա ընդօրինակած ձեռագրերից միայն վեցն են մեզ հասել, որոնք գրվել են նրա կյանքի վերջավոյսին:

Մեզ հայտնի առաջին ձեռագիրը 1416 թվականից է, այսինքն, զրված է 59 տառերից: Այս Ավետարանը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում և կրում է 4309 համաբեր. վերջում կա ոչ մեծ հիշատակարան (273 բ), ապա փոքրիկ զխաղարդ, որից հետո «Յանգիստ Աւետարանիչի Յովհաննու» մասն է (274ա—279ա) և գրչի հիշատակարանը: Սրան հաջորդում է Ներսես Շնորհալու «Այբն Աստուծոյ» տառահանդեսը: Ավետարանի փոքրագիր լինելը, նաև դրանում ամփոփված խրատներն ու Շնորհալու տառահանդեսները վկայում են, որ այդ ձեռագիրը օգտագործվել է ուսումնական նպատակով:

¹ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 4107, էջ 921:

² Նույն տեղում, ձեռ. № 8785, էջ 227 բ:

³ Նույն տեղում, ձեռ. № 4873, էջ 366ա:

⁴ Նույն տեղում, ձեռ. № 8423, էջ 171ա:

⁵ Նույն տեղում, ձեռ. № 4309: Զեռագիրն ունի 14×9 սմ չափսեր, 295 թերթ: Գիրքը՝ բոլորգիր, երկայուն է՝ զարդարված կիսախորաններով և լուսանցազարդերով: Ավետարանի 279ր էջից Ներսես Շնորհալու «Այբ Աստուծոյ» տառահանդեսն է: Սկսվում է այսպես.

Այբ Առաջին զքեզ տղա

Հանէ յիմաստն գերակա

Երբորդութեանն մերձակա

Լինիս երիւք ստեղամբ նորա...

մինչև

Քէն Քեզ համաբել տա բարեկամ... (282ա) վերջին տառը (տե՛ս Ն եր ո է ս Շնորհալու, Բաճք. չափաւ (Բ տգազրութիւն) Վենետիկ, 1928, էջ 369—379): Վերջանում է «Ներսէսի է» նախադրով: Հիշատակարանն ամփոփում է.

Անուշաքում Սարգսի մասին առաջին հիշատակությանը հանդիպում ենք Մատթեոսի Ավետարանի վերջում. «Աշտոռապեալ և զսեփաղիլալ և հոգով անձն Սարգիս կոչեցեալ եպիսկոպոս և գործովք թափուր ի յամենայն մասանց բարեաց, աղաչեմ յիշել ի Տէր, և Աստուած ղձեզ յիշէ, ամէն»:

Է(8) օրն գրեցաւ գրուիս (Մատթեոսի)՝ Այստեղ թերեւ հետաքրքրականը նրա հաղորդած տեղեկությունն է Մատթեոսի՝ դիսի դրութեան ժամանակի մասին, որը գրուվել է նաև հիշատակարանն հրատարակուելի՝ Լ. հաշիկյանի ուղագրությունը. «Այն օրում Սարգիս գրիչն ընդօրինակել է 70 թերթ, ավելի քան 88.000 տպագրական նիշ, Նթն նույն արագութեամբ է նա աշխատել նաև ձեռագրի հաջորդ մասերն ընդօրինակելիս, ապա ամբողջ Ավետարանի ընդօրինակությունն ավարտված պետք է լինի շուրջ մեկ ամսվա ընթացքում: Արտակարգ արագաշարժ ու վարժ գրիչ է»⁷:

Ավետարանի հիշատակարաններից մեկում Սարգիսը հայտնում է ձեռագիրն ավարտելու մասին. «Ամենդասերի և զսեփաղեալ հոգով, շարագործ մարմնով, առջ և կուրացածս Սարգիս աղ[աչեմ յ]իշել ի Տէր... .. թվին ՊԿԾ(1413)»⁸: Զույգած գրիչը ստույգ չի նշում, թե որտեղ է գրվել և ավարտվել ձեռագիրը, սակայն հիշատակարանում տալիս է այն միջավայրի պատկերը, որի ծնունդն է այդ ձեռագիրը: Նա հանդիսանում է այն բոլոր սպասավորներին, որոնք համախմբված են միաբանության առաջնորդ Պարթևարհ վարդապետի շուրջը. «...զտէր Բաղէոսն, զտէր Ստեփաննոսն, զտէր Գրիգորն, զտէր Աղեքսիանոսն, զտէր Վանականն, զտէր Սարկոսն, զտէր Անդոնն, զտէր Շոփանէսն և գտլո Սարգիսն»⁹: Այս հիշատակությանը հանդիպում ենք նրա գրեթե բոլոր ընդօրինակություններում, որ հավաստում է, որանց նույն տեղում գրված լինելը: Որ «սեփաղեալ» Սարգիս եպիսկոպոսը Սարգիս Պարթևաբեկին է, կասկած չի հարուցում: Բանն այն է, որ Սարգիսը «սեփաղեալ» բառը միշտ գրում է «սեփաղեալ» ձևով («ս-ի փոխարեն «վ»): Եվ «սեփաղեալ»-ը միաշարժվել նրա եպիսկոպոսական աստիճանի, հարուստների ու ծոցերի անունների հիշատակության հետ, որոշակի է դարձնում Սարգիս Պարթևաբեկին¹⁰:

Նախանձելի մարդկան լինիս,
Բլ զվերադրեալսդ ի միս ունիս,
Նկ, բեր, մանուկ դունկրն քոյիս
Լուր և անսա իմում բանիս
Ինձ լուր, որդյակ, հօր քո խրատիս
Նա յուսմանէ մի ծուլասցիս,
Եթէ ի յայս սէր բորբոքիս
Անանց կենաց ժառանգ լինիս:

Սրան հաջորդում են այլ շարքեր (282ա—284բ), որտեղից սկսվում է «Հաւատով խոստովանիմք» մինչև 294 էջը:

8 Նույն տեղում, ձեռ. № 4309, էջ 70 ր:

7 Ժն գտրի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կաղմեց Լ. հաշիկյանը, մ. Ա. Երևան, 1955, էջ 185, ծան. 1 (այսուհետև՝ Ժն գրի...):

8 Մատենագարան, ձեռ. № 4309, էջ 273 ր:

9 Նույն տեղում, էջ 279ա:

10 Նույն տեղում, ձեռ. № 4309, 273ր, 70ր, ձեռ. № 8765, 82բ, ձեռ. № 6969, 87 ա: Երկու այլ ձեռագրերի հիշատակարաններ, որոնց ժամանակը և տեղը անհայտ է, ու գրիչն իրեն անվանում է Սարգիս եպիսկոպոս, Լ. հաշիկյանը թեականորեն տեղադրում է Սարգիս Պարտավեցու՝ ժամանակը հայտնի հիշատակարանների շարքում (Ժն գրի..., էջ 185, № 197, 198), Սրանցից 197-ը Մատենագարանի 3670 ձեռագրի հիշատակարանն է: Այս ձեռագրի մանրակրկիտ համեմատությունը վերը նշված բոլոր ձեռագրերի հետ ցույց տվեց, որ այն Սարգիս Պարտավեցու գործը չէ, բացի այդ, հիշատակարաններում միշտ իրեն «սեփաղեալ» անվանող Սարգիսը, այստեղ պարզապես Սարգիս եպիսկոպոս է: Մյուս ձեռագրի ճակատագիրն անհայտ է:

Հաջորդ ձևագիրը Մաշտոցի անվան Մատենադարանի 8765 համարը կրող Աշխարհաց Է. Սարգիս Պարտավեցին այն ընդօրինակել է 1419 թ.։ Ընդօրինակելիս գրիչը «առ Աստուած» ուղղված վերջին գործն է համարում ձևագիրը. «Ջտառապեալս և ղժահայհոտս, ներկեալ շարաւալի հոտով, յերկարեալս մինչև ի յայսմ տեղիս՝ Սարգիս մեղաք լցեալս, ի բազում ժամանակս, որ կամ և մնամ հալեալ ի մեծն Աստուած, միթէ զվերջքն արասցէ ի կէտ, վերջինս ի բարի, աղաչեմ յիշել տերամբ...»¹¹։ Եվ այս մտահոգութեամբ Սարգիս Պարտավեցին համեմատաբար կարճ ժամկետում ավարտում է ձևագիրը. «Գրեցաւ ի Գեղազունի, ի դուրս սուրբ Գրիգորի Լուսաւորչի, ի թվին ՊԿԸ (1419), մարերի Ը(8)»։ Թեև ինքը գրում է. «Ժեր եմ ու աչքս չի տեսնուլ, ձեռս կու դողայ», այնուամենայնիվ, 9 օրում ավարտում է Սատեֆեոսի Ավետարանը¹²։

Գեղարքունիքի ս. Գրիգոր Լուսավորչի վանքում սպասավորող Սարգիսը նույն Սարգիս Պարտավեցին է։ Այստեղ նույն արագավարժ գրիչն է, նույն «սեփաղեալ» Սարգիսը, որ ընդօրինակում է արդեն թվով որբորդ ձեռագիրը։ Զի մոռանում հիշել իր հորը՝ Սուլթանշահին և մորը՝ Մինախաթունին, և որբորդ՝ Դանիելին։ Այս հիշատակարանում ճշտվում է այն վայրն ու գրչության կենտրոնը, ուր ծնվել է ձեռագիրը, գրչին կերակրողներով՝ Մաղաքիայի, Ամիրազիզի և վերջինիս կնոջ Թանկսուղի ու ողջ միաբանության հոգատարութեան պայմաններում՝ Գեղարքունիքի ս. Գրիգոր Լուսավորչի վանքում։

Մատենադարանի 4107 ձեռագիրը Սարգիս Պարտավեցու ընդօրինակութեամբ մի ճաշոց է։ Գրչագրելու հանգամանքների մասին նա գրում է. «...ձեռս կու դողայր և աչքս բնաւ չէր տեսնուլ, գրչի մատն շորացած էր, միջի մատամբս ծրեցաք... ԽԲ(42) տարի է, որ մեր բանս այս է, ապա այսոր նման անդէպ չէր եղեալ, խիստ կու աղաչեմ ի ձեզնէ թողութիւն արարէք»¹³։ Թերևս այդ է պատճառը, որ քսաներկուերորդ սրակից սկսած ձեռագրի ընդօրինակութեանը շարունակում է Հունան գրիչը. «Աւարտեցաւ քրիստոսահայն, առաջելաշէն, մարգարէախաւս այս կտակ յամի ութհարերորդի վառսներորդի և իններորդի Բեականութեան Հայկազեան ազգիս տոմարի (1420), յամսեան հրոտից ԻԱ (21), պատկեր աւուրս՝ հինգշաբթի, ձեռամբ յոգնապայծառ շահաւորեալ տէր Սարգսի և ներգեհեալ և մեղսամակարթ և յիշուն գրչի Յունանի, որպէս և գիրդ ցուցանի՝ ի ԻԲ (22) տետրիցն ի վեր»¹⁴։ Ձեռագիրը Սարգիսը գրեւէ է «...անջինջ յիշատակ հոգւոյ իւրոյ և ամենայն հոգեւոր և մարմնաւոր ծնողաց և երախտաւորաց...»¹⁵։ Սարգիսը, որ միաժամանակ ձեռագրի ստացողն է, հիշում է իր ծննդավայրը. «...ես տառապեալ ոգի տէր Սարգիս Պարտաւեցի»¹⁶։

Սովորաբար գրիչները այս կամ այն ձևագիրը ընդօրինակելիս ձեռք էին բերում ստույգ և ընտիր օրինակներ, որից և օրինակում էին։ Սարգիս Պարտավեցու այս ճաշոցի համար ընտիր ճաղափար օրինակ է ծառայել Գրիգոր Վկայասերի և նրա աշակերտ Գեորգ Դրագարկցու կազմած ճաշոցը, որը, սակայն, Մշո ս. Կարապետի առաջնորդ Ստեփանոսի պատվերով Տիրացու քահանան խմբագրել էր, ավելացնելով նոր տոներ։ Հենց այս օրինակից էլ նա կատարել է իր ընդօրինակութեանը։ Սարգիս Պարտավեցին հե-

¹¹ Մատենադարան, ձեռ. № 8765, էջ 218ա։ Փոքր չափսերի է (15×11,3 սմ), 227 թերթով։ Գիրը՝ բոլորգիր, երկայուն, յուրաքանչյուրում՝ 19 տող։ Ամեն մի տուն սկսվում է երկաթագրով, երկուական նախադասությունը՝ մանուշակագույն, ամբողջ գլուխը՝ սև թանաքով։

¹² Նույն տեղում, էջ 277ր։ Լ. Խաչիկյանը կրկին նկատում է, որ Սարգիս գրիչը նույն արագութեամբ ավարտել է սույն ձեռագիրը՝ շուրջ մեկ ամսում (Ժն դարի..., էջ 229, ծան. 3)։

¹³ Նույն տեղում, ձեռ. № 4157, էջ 503։

¹⁴ Նույն տեղում, էջ 920։

¹⁵ Նույն տեղում։

¹⁶ Նույն տեղում, էջ 921։

տաքերի տեղեկություններ է տալիս Ճաշոցի մասին, ավելացնում նաև Տիրացու քահանայի կատարած խմբագրական հավելումները¹⁷։

Մատենադարանի № 6969 ձեռագիրը նույնպես Սարգիս Պարտավեցու ընդօրինակությունն է։ Այն գրվել է խորասանի և Պարոկաստանի խան Շահ-րուխի (Լենկ Թեմուրի որդին) արշավանքի տարիներին։ Ավետարանի հիշատակարանը խիստ քայքայված է, մանավանդ վերջին տողը, և չ. նաչիկյանը կասկածում է ձեռագրի ավարտի թվականի ստուգությանը¹⁸։ Չնայած հիշատակարանի եղծվածությանը, դրանում պահպանված տեղեկությունները մեզ հնարավորություն են տալիս իմանալ ձեռագիրը դրելու հանդիմանքները. «անհուն դառնութեամբ՝ տեղացի տեղ փոխելով, ի յառաջարկին ընթանալով, անհանգիստ, քաղցրահամ և ծարաւ... ո՛վ կարէ ի վեր արկանել...»¹⁹։ Այն նկարագրող է, ունի գեղեցիկ մանրանկարներ, բոլոր լուրս էլ արված են գրչի ձեռքով։

Ձեռագիրը հետաքրքիր է նաև նրանով, որ գրիչը, թուղթը խնայելու նպատակով, յուրաքանչյուր Ավետարանի վեջում եղած «հիշատակութեան» թղթից հետո (որն զբաղեցնում է էջի առաջին սյունակը), երկրորդ սյունակում ծաղկել է հաջորդ ավետարանի նկարը²⁰։ Ձեռագիրն ունի գեղեցիկ լուսանցազարդեր, երբեմն լուսանցապատկերներ (հրեշտակներ՝ 147ա, Գաբրիել հրեշտակագետ՝ 143ա)։ Մանրանկարները, լուսանցազարդերը, հուշկապարիկները (42ա) արել է գրիչը՝ նույն թանաքով։ Հետագայում ձեռագիրը դառնում է տեղի Հովսեփի սեփականությունը (87ա)²¹։

1422 թ. Սարգիս գրիչն ընդօրինակում է մի Ավետարան, որը Մատենադարանի № 8423 ձեռագիրն է։ Մարտիս կախսկություն այն գրում է ի հիշատակ «...ծնողացն մեր, նախ՝ Սուրբանշին, Մինայաթունին, և եղբարն իմ Յովանէս քահանային, Մաթևոսին և այլ արեան ճիւղաւորաց մերոց...»²²։ Ուրեմն ձեռագրի ստացողն էլ ինքն է։ Ձեռագիրը քայքայված է եղել և նրա վերջին կազմովը այն նորոգել է 1624 թ.։ «Գրիչի գտուրը Աւետարանս երկու գլուխն և ծաղկեցի ըստ կարողութեան մերում և կազմեցի ի թվականիս Հայոց ՌՀԳ (1624)»²³, Հաշարծին ս. Աստվածածին և ս. Գրիգոր Լուսավորիչ վանքում։ Այժմ ձեռագիրը կրկին թրի է, սկսվում է Մատթեոսի 200-րդ գլխից։ Կազմելու ժամանակ Հովհաննեսը ծաղկում է նաև Մարկոսի ավետարանառաջը (17ա)։ Ձեռագրի հաջորդ՝ Ղուկասի և Հովաննու ավետարանառաջները նկարազարդված են Սարգիս Պարտավեցու ձեռքով։

Սարգիս եպիսկոպոս Պարտավեցու ընդօրինակություններից է նաև Մատենադարանի № 4873 ձեռագիրը։ Դա Հայոմավուրք է՝ արտագրված 1427 թ. Կոթիփորո (Ընկուղայ գոմ) վանքում։

17 Նույն տեղում, էջ 922։

18 Ժն դարի..., էջ 260, ծան. 2։

19 Մատենադարան, ձեռ. № 6969, էջ 205ր։ Այն փոքրագիր է ($15 \times 11,4$ սմ), ունի 296 թերթ։ Գիրը՝ բոլորգիր, երկսյուն, յուրաքանչյուրում՝ 19 տող։ Ունի չորս ավետարանիչներ, դիւանազարդեր և լուսանցազարդեր։

20 Նույն տեղում։ Մատթեոսի ավետարանը զբաղեցնում է ձեռագրի 2ա-87ա էջերը, որից հետո հիշատակագրություն է (87ա-87բ), ապա 87բ երկրորդ սյունակում՝ Մարկոս ավետարանի նկարը։ 88ա-ից Մարկոսի Ավետարանի զխազարդն է, մինչև 140բ-ի առաջին սյունակը, նույն էջի երկրորդ սյունակում՝ Ղուկաս ավետարանի նկարն է։ 141ա-ից սկսվում է Ղուկասի Ավետարանը և ավարտվում 230բ-ի առաջին սյունակում։ 230բ-ի երկրորդ սյունակում Հովհաննես ավետարանի նկարն է։

21 Նույն տեղում, ձեռ. № 6969, էջ 87ա։

22 Նույն տեղում, ձեռ. № 8423, էջ 171ր։ Ավետարանը ($15,3 \times 12,5$ սմ) ունի 172 թերթ։ Գիրը՝ բոլորգիր, երկսյուն, յուրաքանչյուրում՝ 19 տող։ Նկարազարդված է, ունի ավետարանառաջներ, լուսանցազարդեր, նորոգվել ու կազմվել է 1624 թ. (59ա)։

23 Նույն տեղում, ձեռ. № 8423, էջ 59ա։

Միշտ չէ, որ ընթերցանակերու համար ընտիր օրինակը գրիչներին տրվել է միանգամից և հնչողությամբ: Եղել են դեպքեր, երբ նրանք այդպիսի օրինակների հետևից գնացել են «բազմաթիվ անդամներ», մերժվել ու չեն հուսահատվել: Այդպիսին է եղել և Սարգիս Պարտավեցու այս ձեռագրի ընտիր գաղափար օրինակից արտագրելու ցանկությունը: Նա տառապանքով հիշում է. «Փափագ ունի[է] ի տղայութենէ յայս սուրբ նշխարացս և շղատնէի: ԻԳ (23) ամ շուրջ եկի՝ աւրինակ շրտային, լալով և պաղատ[ան]աւք հայցեցի ի յամենայկարող փրկչէն... որ ետուր ինձ ողորմութիւն»²⁴: Ծերութեան պատճառով, ինչպես ինքն է վկայում, «...ԻԱ (21) տարի է, որ գրչի ծայրն ու մաղ չեմ տեսնու, ու ձեռս կու դողայ...»: Նա Լրկու հազար դահեկան ու «զթուղթն ու զամէն նիւթ» տալով, խնդրում է օրինակել: «Անիրավներ» մերժումից հետո, սրտի ցավով Աստուծոն ապավինելով, արտագրում է Կարապետ կրօնավորից ստացած Հայսմավուրքի այս օրինակը²⁵:

Ավարտելով ձեռագիրը «ի թուիս Հայոց ՊՁԶ (1427), յահիկ Բ(2)»...», նա Լրախաագիտություն է հայտնում Իգնատիոս վարդապետին, Հորդանանին և Երևմտյան, որոնք. «...աշխատել են վասն մեր՝ կերակրելով...», միաժամանակ խնդրում է հիշել Հովհաննեսին ու Սարգսին, «որ մեզ ջուր են բեր[ել], զՄարտիրոսն, որ մեզ մեղր է տուել» և բոլոր, բոլոր նրանց, որոնց օժանդակությամբ ինքն ավարտել է սույն ձեռագիրը²⁶: Այստեղ Սարգիս Պարտավեցին հիշում է Հայոց Արևելյան տան դպրոցների վարդապետներին և բաբունապետներին՝ «...յաղագս քաջ և արի, ժրջան զսուրբ վարդապետքն մեր յիշեսցիք ի մաքրապայլ աղաթս ձեր. նախ՝ Գոշա, Վանականա, Վարդանա, Ներսեսի, Յեսայիայ, Տիրայարու, Բարսղի, Գրիգորի, Ծերունի, Կիրակոսի, Դրիգորի, Յովսէփի, Յակոբի, Մաղաքիայի, Յոհանիսի, Սարգսի, Վարդանի, Գրիգորի՝ քաջ և արի հոգևորի, Գեորգեայ, Յակոբին, Մաթէոսի և այլ ամենայն համարէն վարդապետացն, որ ի ստեղծմանէն յաշխարհիս մինչև ցայսօր հանգուցեալ կան...»²⁷:

Հիշատակարանում նշված Գոշը Մխիթարն է՝ Գոշավանքի դպրոցի հիմնադիրը: Վանականը Տավուշեցին է՝ Խորնաշատի դպրոցի վարդապետը, Վարդանը Արևելցին է՝ Խորվիրապի վարդապետարանի ուսուցչապետը՝ Ներսեսը Մշեցին է՝ Մշո Առաքելոց և Աղբերց վանքերի ընթերցողապետը, Եսային Նշեցին է՝ Գլաձորի համալսարանի ընթերցողապետը, Տիրատուրը Կիլիկեցին է՝ Հերմոնի համալսարանի ընթերցողապետը, Բարսղն ու Գրիգորը այդ նույն համալսարանի ընթերցողներն են²⁸: Ծերունն ու Կիրակոսը Մեծոփավանքի դպրոցի ընթերցողներն են²⁹, Գրիգորը Տաթևացին է՝ Տաթևի համալսարանի ընթերցողապետը, Հովսեփը Սանահնի ընթերցողն է³⁰, Հակոբը Ղրիմեցին է՝ նշանավոր տոմարագետը, Մաղաքիան Ղրիմեցին է՝ նշանավոր վարդապետը, Հովհաննեսը Որոտնեցին է՝ Որոտնավանքի համալսարանի ընթերցողապետը, Սարգիս Ապրակունեցին, Վարդան Հոգոցվանեցին և Գրիգոր Ծերենցը Խառաբաստավանքի ընթերցողներն են, Գեորգ Երզնկացին՝ Կապոսի վանքի, Հակոբ Սաղմոսավանեցին՝ Սաղմոսավանքի ընթերցողներն են, Մատթեոսը Տաթևի վարդապետն է:

Արևելյան վարդապետների այս ցանկը կա նաև Սարգիս Պարտավեցու 1422 թ. արտագրած ձեռագրի հիշատակարանում³¹: Քննենք վերջին՝ 1427 թ., ձեռագրի ցանկը, լրացնելով և համեմատելով այն նախորդի հետ՝ Համեմա-

²⁴ Նույն տեղում, ձեռ. № 4873, էջ 366ա:

²⁵ Նույն տեղում, էջ 366բ, 366ա:

²⁶ Նույն տեղում, էջ 366բ—367ա:

²⁷ Նույն տեղում, էջ 366բ:

²⁸ ԺՆ դարի..., էջ 301:

²⁹ Նույն տեղում, էջ 127—128:

³⁰ Նույն տեղում, էջ 257:

³¹ Մատենադարան, ձեռ. № 8423, էջ 172ա:

տուժյան մեջ դնելով այս երկու հիշատակարանների ցանկերը, 1422 թ. հիշատակարանի արևելյան վարդապետների շարքում նկատեցինք որոշ տարբերություններ: Այստեղ հիշվող Առաքելը Սյունեցին է, Սարգիսն ու Կյուրիոսը Գլաձորի համալսարանի բարձունքներն են: Ղազարը և Հովսեփը Սանահինի բարձունքներ են³², Սարկավազը Տաթևի համալսարանի վարժապետներից է³³,

Սարգիս գրչի հիշատակած վարդապետների այս շարքը բացակայում է ձեռագրերում պահպանված հայ և օտար սլաոմիչների, մեկնիչների, բաբունապետների շարքերից³⁴,

Արևելյան վարդապետներին թվարկելուց բացի Սարգիս Պարտավեցին թե՛ նախորդ և թե՛ իր ժամանակակից գրիչներից առանձնանում է մեկ այլ տարբերիչ գծով ևս: Սովորաբար գրիչները ձեռագրերի ընդօրինակությունը ավարտելիս թողնում են ընդարձակ հիշատակարան, որը սկսվում էր ամ ավարտվում է գրելու ժամանակի, տեղի, միաժամանակ նաև սշխարհի և հոգևոր առաջնորդների հիշատակությամբ: Այս գրչի և ոչ մի ձեռագրում նման կաղապարի չենք հանդիպում: Դրա փոխարեն նա հիշում է այն բոլոր կաթողիկոսներին, որոնք ժամանակակից են իրեն կամ գահակալել են ոչ հեռու անցյալում ու եղել են Կիլիկիայի, Աղթամարի և Աղվանից աշխարհի հայրապետներ: Տեր Ստեփանոսը Բ (ԺԳ զ. վերջ) և Ներսեսը (1235—1265) Աղվանից կաթողիկոսներ են, Մեսրոպը՝ Կիլիկիայի (1355—1377), Զաքարիան՝ Աղթամարի (1369—1392), Հայրապետներից հետո ու նրանց կողքին Պարտավեցին հիշում է նաև իր միաբանության մեջ մտնող հոգևոր բոլոր հայրերին. «...ղտէր Թադէոս, զտէր Թէորոս, զտէր Ստեփանոս, զտէր Կարապետ, զտէր Գրիգոր, զտէր Վանական, զտէր Ալէքսիանոս, զտէր Կարապետ, զտէր Նիկողայոս, զտէր Կարապետ... զտէր Յովանէս, զտէր Առաքել, զտէր Սարգիս, որ զգիրքս գրեցի, զՄաթէոս քահանայ...»³⁵,

Այս Հայսմավուրքը Պարտավեցուց մեզ հասած վերջին ձեռագիրն է, որ գրվել է ու ավարտվել՝ «ի թուիս Հայոց ՊԶԶ (1427) յահիկ ի Բ (2) ի տեղիս, որ աւարտեցաւ ի Կոթիփորոյ վանքս որ կոչի և Ընկուղայդոմ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս»³⁶, Այս և նախորդ բոլոր ընդօրինակությունները Սարգիս Պարտավեցին արել է Գեղարքունիքի Կոթիփորո (Կոթի) վանքում³⁷, Սա Գեղարքունիքի հռչակավոր վանքերից է՝ իր ս. Աստվածածնա և ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիներով: Մինչ այս նա Գեղարքունիքում գրել է նաև Մատենադարանի 8765 համարի ձեռագիրը. «Գրեցաւ ի Գեղարքունի, ի դուրս սուրբ Գրիգորի Լուսավորչի...»³⁸, Սարգիս Պարտավեցին մեկ այլ ձեռագիր ավարտում է Գրիգոր Լուսավորչի տոնի օրը և վկայում. «Գրեցոյ || || յաւուր [Լուսաւ]որչի պահոցս...»³⁹,

Այսպիսով, Գեղարքունիքի Կոթիփորո Ընկուղայդոմի ս. Աստվածածին և Գեղարքունիքի ս. Գրիգոր Լուսավորչի շուրջ Կոթի վանքն է: Մենք նույն-

³² Նույն տեղում:

³³ Ղ. Ալիշանը Սարկավազին նույնացնում է Մխիթար Տաթևացու հետ (Տաթևի համալսարանի բարձունքներ) (Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 241):

³⁴ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ե—ԺԸ դդ., հ. Ա, Երևան, 1959, էջ XLIII—LXXVI:

³⁵ Մատենադարան, ձեռ. № 4873, էջ 366 ր:

³⁶ Նույն տեղում, էջ 367ա:

³⁷ «Փորձ բառը նշանակում է նաև «կող, կողմ», «խորշ տեղաց» (Բառգիրք հայկազեան լեզուի, Կ. Պոլսի, 1346, էջ 874): Գեղարքունիքի Կոթի ս. Աստվածածին եկեղեցին կառուցված է այսպիսի տեղում:

³⁸ Մատենադարան, ձեռ. № 8765, էջ 277ա:

³⁹ Նույն տեղում, ձեռ. № 6969, էջ 205ր:

նացնում ենք դրանք, նկատի ունենալով նաև այդ երկու տեղերում եղած միարանների և հիշատակվող այլ անձանց նույնությունը:

Սարգիս Պարտավեցու դրեթե կեսդարյա ձեռագրական ժառանգությունից մեկ հասել է միայն նրա գործունեության վերջին տասնամյակի՝ 1416—1427 թթ., տարբեր բովանդակության ընդօրինակությունների 6 ձեռագիր (բացի սրանից նրան է վերագրվում եւ մի ձեռագիր, որի նվիրատուն է ինքը)⁴⁰: Առաջին տասնամյակների նրա ձեռագրական ժառանգությունից, այսինքն, ծննդավայրում օրինակած ձեռագրերից մեկ ոչինչ հայտնի չէ: Չնայած դրան, այս փոքրաթիվ ձեռագրերի ուսումնասիրությունը ջուլյ է տալիս, որ դործ ունենք ինքնատիպությամբ աչքի ընկնող, խիստ բնագրավոր դրվի հետո նա աչքի է ընկնում իր մասին հաղորդած մանրամասներով, գրչության հանդամանքներին վերաբերող տվյալներով, արժեքավոր և հետաքրքիր մատենագիտական տեղեկություններով, իր կազմած Արևելյան վարդապետների ու հայ կաթողիկոսների ու հայրապետների մատենագրական ցանկերով: Սարգիս Պարտավեցուն հետևելով հետագայում կաղմվում են այդ տիպի մատենագրական այլ ցանկեր: Այս իմաստով նրան կարելի է համեմատել առաջմ մեկ հայտնի ամենաարեղմնավոր գրիչներից մեկի՝ Արհիշեցի Հովհաննես Մանգուարինյի հետ, որը, իր աշակերտի վկայությամբ, որևէ է 132 ձեռագիր⁴¹: Այդ ձեռագրերից մեկ են հասել միայն տասներե: Եթե Սարգիս Պարտավեցին, որն ումիսը մեկ ձեռագիր էր ընդօրինակում, տարևական նույնիսկ շորս մատչյան ընդօրինակեր, նրանից պետք է ունենաինք 160 ձեռագիր, բայց հասել է միայն 6-ը: Ուրեմն, որքան մեծ է հայ ձեռագրական մշակույթի կորուստը:

ПИСЕЦ САРГИС ПАРТАВЕЦИ

А. А. КАЗАРОСЯН

Р е з ю м е

Многовековая армянская рукописная культура многим обязана самоотверженному труду бесчисленных писцов, которые нередко в тяжелых условиях, не щадя сил и здоровья, занимались нелегким делом переписывания рукописей. Одним из таких писцов-каллиграфов был Саргис родом из города Партава провинции Утик (род. в 1357 г.). Впервые с его именем встречаемся в памятной записи рукописи 1416 г. в которой он сообщает, что уже 40 лет как занимается трудной профессией переписчика. Однако из всего этого периода до нас не дошло ни одной его рукописи.

Саргис Партавец был удивительно плодотворным писцом. Однако, к сожалению, сохранилось лишь шесть рукописей, переписанных его рукою и охватывающих период с 1416 по 1427 гг.

⁴⁰ ԺԵ գրքի..., էջ 185:

⁴¹ Նույն տեղում, էջ 587, ծան. 1: